և առանց ոչինչ նշոյլ ծանօթութեան հատատաց մարդեղութիւն բանին Քրիստոսի, Յիսուս Նազովրացի որդի Աստուծոյ կենդանւոյ, այսինքն Սպկարոս Արշամայ թագաւորն Հայոց՝ ի վերայ երկրին Արարատեան։

Մի լիցի առանց պատճառաւ դի միմիայն միայնակ անճառելի հրաշքն որ եղև ՝ի վերայ երկրին Արարատեան դի սուրբն Գրիգորիոս բաղհաւունին որում հայրն նորա Անակ այնքան սիրեաց աշխարհ մինչ ՝ի վերախոստման պարգևի միոյ անուտոյ արտաշրի թագաւորին Պարսից դաւաճան եղև ընդ դէմ ազգականի իւրոյ մինչև սպան Խոսրով թագաւորն Հայոց, դի գոցէ փառս ՝ի թագաւորէն Պարսից, այ բարեգոյն որդին սորա ընդ դէմ ցանկութեան հօր գարշելի համարելով ամենայն փառս աշխարհի՝ եմոյծ զինքն ՝ի մէջ բուբաստանին անոշահոտ խոնարհութեան և յանձն էառ չարչարանս այնքան տուժելի, որում սա միայն գտաւ ՝ի վերայ երկրի և ՝ի ներքոյ արեգական հնգետասան ամաւ չարչարանօք կալով ճնալով կենդանի ընդդէմ բնութեան հարուածոց, մինչ գտաւ Շնորհս ՝ի Տեառնէ՝ զի մկրտեաց նոր ընծայն Քրիստոսի Տրդատէս թագաւորն Հայոց ազնիւք իշխանօք և անհամար ժողովրդովք հանդերձ ՝ի Եփրատ գետն, որում ոռոգանի Արարատէն առ Ովկիանոս։